ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"6 " օգոստոսի 2012թ. № 63 -Ա

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի և հիմք ընդունելով <<Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Ավանեսյանի անձնական դիմումը,**կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1. <<Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Ավանեսյանին 2012 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը տրամադրել 2012թ. օգոստոսի 6-ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.օգոստոսի 6
ք. Կապան